



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2014 թվականի N 332 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 1075-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1075-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 4-րդ՝ «Կատարման ժամկետը» սյունակի «2014 թ.» բառերը փոխարինել «2015-2016 թթ.» բառերով,

2) 2-րդ կետի 2-րդ՝ «Միջոցառման անվանումը՝ ըստ ոլորտների» սյունակից հանել «Գանձաքարի գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակում-11168.0» բառերը,

3) 6-րդ կետի 6-րդ՝ «Պատասխանատու կատարողը» սյունակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ Տավուշի մարզպետարան, Դիլիջանի քաղաքապետարան»,

4) 9-րդ կետի 6-րդ՝ «Պատասխանատու կատարողը» սյունակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Ասիական զարգացման բանկ (համաձայնությամբ), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ)»,

5) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

« 11.	Դիլիջանի քաղաքային համայնքի գերեզմանատների շահագործման խնդիրների կանոնակարգում	գերեզմանատների կառուցապատման հատակագծերի մշակում, բարեկարգման աշխատանքների իրականացում	2014-2016 թթ. բարեկարգում, հսկողություն յուր. տարի	15000,0 - յուր. տարի սպասարկման համար (սպասարկումը համայնքի միջոցներով) (համայնքի բյուջեով նախատեսվել է 18000.0 հազ. դրամ 2014-2016 թթ. համար, յուր. տարի 6000.0 հազ. դրամ 6 գերեզմանատան հսկողություն)	Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ Տավուշի մարզպետարան ՀՀ քաղաքաշինության նախարարություն
-------	--	--	--	---	---

6) 23-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

« 23.	Դիլիջանի հանրակրթական օբյեկտների, պետական քոլեջի վերանորոգում պետական քոլեջի, Դիլիջանի ավագ դպրոցի և 4-րդ հիմնական դպրոցի վերազինում համապատասխան նյութատեխնիկական բազայով (արվեստ, մարզական և լաբորատոր գույք.)	դպրոցահասակ երեխաներին վերանորոգված, ջեռուցվող, լուսավոր դասասենյակներով ապահովում դպրոցահասակ երեխաներին տեխնիկապես հագեցած դասասենյակներով ապահովում	2015-2017 թթ.	13 օբյեկտ, որից երկուսը (1500000.0) ընդգրկված են «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման եփթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման մեջ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ, միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ Տավուշի մարզպետարան Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ Տավուշի մարզպետարան Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
-------	---	---	---------------	--	---

7) 41-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«	41. Դիլիջան քաղաքի նոր աղբավայրի տարածքի ընտրություն, ինժեներակառուցական հետազոտություն և նախագծի մշակում, գործող աղբավայրի կոնսերվացման նախագծի մշակում	նոր աղբավայր Դիլիջանի և Տավուշի մարզի համար, աղբահանության և աղբի վերամշակման ծրագրի մշակում	2014-2015 թթ.	50000.0 6100.0 մասնակի ֆինանսավորում ՀԱՀ Հակոբյան քննադատական կենտրոնի կողմից	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Տավուշի մարզպետարան Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
---	--	--	---------------	---	---

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. ապրիլի 22
Երևան

